



## Ձ. ԿԻՐԱԿԻ ԽԱՉԷՆ ԵՏՔ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յօգւոյն հետ փրկե՛մեզ:

### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԳՉ

Քրիստոս Թագաւորը օրհնութեան երգով բարեբանեցե՛ք, արար աշխարհ:

Երկինքը եւ երկիրը ստեղծողին երգով գոհաբանութիւն մատուցանենք, արար աշխարհ:

Երրորդութեան ու մէկ Աստուածութեան պատիւ, երկրպագութիւն մատուցանենք յաւիտեան, արար աշխարհ:

### **ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)**

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր Էակ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

## **ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆԸ ԲՐԻՍՏՈՍՈՎ**

### **Պօղոս առաքեալին գաղատացիներուն ուղղած թուղթն (Գաղ 4, 1-18)**

Արդ՝ ես կ'ըսեմ. ցորքան ժամանակ ժառանգորդը տղայ է, ծառայէն աւելի բարձր չէ, թէպէտ տերն է բոլոր ինչքերուն: Խնամակալներու եւ տնտեսներու հովանաւորութեան տակ է մինչեւ հօր կողմէ որոշուած թուականը: Մենք ալ, մեր տղայութեան շրջանին, ենթակայ էինք աշխարհի տարրերուն: Երբ հասաւ ժամանակներու լրումը, Աստուած դրկեց իր Որդին, որ ծնաւ կնոջմէ, մտաւ Օրէնքի տակ, որպէսզի ազատագրէ Օրէնքի հպատակները եւ մեզի պարգեւէ որդեգրութեան շնորհքը: Քանի որ դուք որդիներ էք, Աստուած դրկեց մեր սրտերուն մէջ իր Որդիին Յոգին, որ կ'աղաղակէ՝ «Աբբա, Հայր»: Ուրեմն այսուհետեւ ծառայ չես, այլ՝ որդի, եթէ որդի՝ ուրեմն Աստուծոյ շնորհքով ժառանգորդ:

Ատենօք, երբ կ'անգիտանայիք Աստուած, ծառայեցիք անոնց, որոնք բնութեամբ աստուածներ չէին: Բայց հիմա որ Աստուած ճանչցաք, կամ մանաւանդ Աստուած ձեզ ճանչցաւ, ի՛նչպէս կը վերադառնաք այն անարժէք եւ անզօր

տարրերուն եւ կ'ուզէք վերստին անոնց ծառայել: Կը քննէք օրեր, ամիսներ, եղանակներ եւ տարիներ: Կը վախնամ, թէ ի գուր վաստակած եմ ձեզի համար:

Եղբայրներ՛, կ'աղաչեմ, ինձի նմանեցէ՛ք, ինչպէս ես ձեզի նմանեցայ: Երբեք չվշտացուցիք զիս: Գիտէք թէ հիւանդութիւն մը առիթ եղաւ ինձի, առաջին անգամ Աւետարանը քարոզելու ձեզի: Թէպէտ տկար մարմինս ծանրութիւն մըն էր ձեզի, սակայն ո՛չ արհամարհանք ցոյց տուիք, ո՛չ ալ պժգանք, այլ՝ ընդունեցաք զիս իբրեւ Աստուծոյ հրեշտակը, իբրեւ Յիսուս Բրիստոս: Ո՛րք է հիմա երբեմնի ձեր այն ուրախութիւնը: Այս վկայութիւնը կու տամ ի նպաստ ձեզի. եթէ հնար էր, ձեր աչքն անգամ կը հանէիք եւ կու տայիք ինձի: Թշնամի՞ եղայ ձեզի՝ ճըշմարտութիւնը ըսելով: Այն մարդոց համակրանքը ձեզի՝ լաւ մտքով չէ: Կ'ուզեն բաժնել ձեզ ինձմէ, ձեզ իրենց կապելու համար: Լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին, սակայն միշտ եւ ո՛չ թէ միայն այն ատեն, երբ ձեր մէջն եմ:

### **Ալէլուիա, Ալէլուիա,**

Իսրայել եթէ իր Արարիչով ուրախացաւ, Սիոնի որդիներն ալ իրենց Թագաւորով թող ցնծան:

(Սաղմոս 149, 2)

### **Ալէլուիա:**

# ԱՒԵՏԱՐԱՆ ՅԻՍՈՒՍ ՆԱԶԱՐԵԹԻ ՄԵՋ

(Դուկ 4, 14-24)

Մեր Տէր Յիսուս Զրիստոսը Յոզիի գօրութեամբ Գալիլիա վերադարձաւ եւ անոր համբաւը շուտով տարածուեցաւ այն շրջանի բոլոր կողմերը: Կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ եւ ամէնքը կը փառաւորէին զինք:

Յիսուս եկաւ Նազարեթ, ուր սնած էր եւ իր սովորութեան համաձայն, շաբաթօրը մտաւ ժողովարան եւ ոտքի ելաւ ընթերցում ընելու: Իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը, բացաւ զայն եւ գտաւ այն տեղը, ուր գրուած էր. «Տիրոջ Յոզիս վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ դրկեց՝ քարոզելու Աւետարանը աղքատներուն, գերիներուն՝ աւետելու ազատութիւն, կոյրերուն՝ աչքի լոյս, հարստահարուածներուն՝ ազատութիւն եւ հռչա-

կելու Տիրոջ տարին»: Գիրքը փակեց, տուաւ պաշտօնեային ու նստաւ: Ժողովարանին մէջ, ամէնքը իրենց աչքերը վրան սեւեռած էին: Սկսաւ ըսել անոնց. «Այսօր, այս գրուածքը, զոր դուք լսեցիք՝ իրականացաւ»: Ամէնքը կը վկայէին իրեն ու կը հիանային շնորհքով օծուն խօսքերուն վրայ, որոնք կ'ելլէին անոր բերնէն: Եւ կ'ըսէին. «Միթէ ասիկա Յովսէփի որդին չէ՞»: Յիսուս ըսաւ անոնց. «Անշուշտ պիտի ըսէիք ինծի այս առածը. «Բժիշկ, դուն քեզ բժշկէ»: Ինչ որ լսեցիք որ ըրեր եմ Կափառնաում, Նոյնը հոս ըրէ, քու հայրենիքիդ մէջ»: Յետոյ ավելցուց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, չկայ մարգարէ մը, որ ընդունելի ըլլայ իր հայրենիքին մէջ:

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

### «Ինչո՞ւ եկած է Յիսուս»

Եսայի մարգարէի 61-րդ գլուխին սկիզբը հանդիսացող այս խօսքերը կրնան առանցքը եւ ողնահարը դառնալ մեր հաւատքին: Արդարեւ, Յիսուս սովորական անձի մը պէս չկարողաց այդ խօսքերը, այլ հեղինակութեամբ, կարծես ինքն էր ներշնչողը զանոնք երբ ըսաւ.- «Այսօր իրականացաւ այս գրուածքը»: Այս հաստատումով Ան կու գար իրեայ ժողովուրդին ըսելու.- Ես եմ Տէրը եւ Աստուածը որ այս օրէնքը դրաւ հին կտակարանին մէջ, իսկ հիմա ալ նոր հանգրուան պիտի սկսի, քանզի այս խօսքերը լոկ գրութիւն մը ըլլալէ դադրեցան եւ հասան իրենց կատարումին եւ իրականացման:

Ան վերջնականապէս հռչակեց Տիրոջ շնորհքի տարի, այսինքն մեղքերու թողութեան տարի եւ Աստուծոյ հատուցման օր:

Վերջնականապէս՝ կը նշանակէ թէ իրեայ ժողովուրդը ալ պետք չունէր այդ յոբելէնական տարիին, որով ամէն 50

տարին անգամ մը քահանայապետը համայն ժողովուրդին բոլոր մեղքերը կը ներկայացնէր Աստուծոյ եւ անոնց համար Տիրոջմէն թողութիւն կը խնդրէր:

Յիմա Նոյնինքն Տէրը, որ այդ յոբելէնական տարին հաստատած էր եւ երկնային քահանայապետն է, վերջնականօրէն կ'արձակէ մարդկութիւնը եւ իրեայ ժողովուրդը իր մեղքերէն:

Վասնզի գերիները, որոնց ավետարանը պիտի քարոզուի, մենք՝ մեղաւորներս ենք, որ մեղքին եւ չարին գերութեան տակ կը գտնուինք:

Մեր հոգիներուն աչքերը կոյրցած, մեր սրտերն ու խորհուրդները խաւարի մէջ ընկղմած ըլլալով, Ան կու գայ մեզի խոստանալու մեր աչքերը բանալ: Ըստ Սուրբ Գիրքին, աչքը կը խորհրդանշէ օրէնքը, որուն միջոցաւ միայն կը տեսնէր իրեայ ժողովուրդը: Այդ աչքը կոյրցած է եւ այլեւս դեպի ուղղիղ ճանապարհներ չ'առաջնորդէր:

Յիսուս, որպես Տերը այդ օրէնքին, պիտի բանայ ժողովուրդին աչքերը որպէսզի անլի լաւ տեսնէ այդ օրէնքը, եւ անոր միջոցաւ լուսաւորուած աչքերով գալէ իր կեանքի ճանապարհէն:

Այս աշխարհի օրէնքներէն հարստահարուած մարդկութեան դիմաց յոյսի դռները պիտի բացուին եւ ազատութեան լոյսը պիտի ծագի, որով Տերը անոր ուսերուն վրայէն պիտի վերցնէ մեղքի լուծը:

Ահա թէ ինչու Նազարեթի ժողովուրդը հիացած կ'ընդունէր Յիսուսի խօսքերը: Անոնք այս անգամ իրենք զիրենք կը գտնէին Նոյնինքն Ասոր դիմաց, որուն մասին մարգարեացած էր Եսայի մարգարէն:

Այլեւս մարգարէն չէր որ կը խօսէր, այլ Այն Նոյն անձը որուն մասին կը կարդային դարեր շարունակ, Նոյնինքն ինդրոյ առարկան, որուն մասին այդ խօսքերը գրուած էին, սակայն մերժեցին զինք եւ չուզեցին հաւատալ անոր խոստումներուն ու հեղինակութեան: Անոնք կառչած մնացին իրենց հոգեւո-



րականներուն վարդապետութեանց եւ ընտրեցին խաւարը քան լոյսը:

Իսկ մենք՝ այս խօսքերուն դիմաց, պէտք է ամբողջութեամբ յանձնուինք անոր փրկարար եւ յոյս ու փառք խոստացող կամքին ու Ասոր մէջ գտնենք մեր կեանքին իմաստն ու արժէքը:

## ԻԱԶԳԻՒՏԻ ՏՕՆԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրով կը հրաւիրենք ձեզ  
**Հայրապետական Սուրբ Պատարագին**

զոր պիտի մատուցանէ  
**Ամենապատիւ եւ Գերերջանիկ  
Տեր Գրիգոր Պետրոս Ի.**

*Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ հայոց*

Կիրակի, 29 Հոկտեմբեր 2017, առաւօտեան ժամը 10.30-ին,  
Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ-Չալքա:

Յաւարտ Ս. Պատարագի՝ մատաղօրհնէք եւ հիւրասիրութիւն:

39. Նախատեսուած է նաեւ կէսօրուայ ճաշկերոյթ Ամենապատիւ եւ Գերերջանիկ  
Հոգեւոր Տիրոջ շուրջ: Մասնակցիլ փափաքողներուն համար՝  
դիմել ժողովրդապետութեանս գրասենեակը 04/710736-7 կամ 03/206263

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: [eparchy@armeniancatholic.org](mailto:eparchy@armeniancatholic.org)  
[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)